

2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍ ԱՄՍՎԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍ ԱՄԻՍ  
ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՄԱՐՁԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԵՎ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՍՊՈՐՏԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ  
ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հիմք ընդունելով ՀՀ Ազգային ժողովում հավանության արժանացած ՀՀ կառավարության 2015 թվականի հունվարի 15-ի N 111-Ն որոշման 1-ին հավելվածի 69-րդ, 70-րդ և 71-րդ կետերի, ՀՀ կառավարության 2014 թվականի մայիսի 19-ի N 511-Ա որոշման հավելվածի «2.4.6.3. Ֆիզիկական կուլտուրան և սպորտը» բաժնի, Հայաստանի Հանրապետությունում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման 2013-2017 թվականների ծրագրի պահանջները՝ իրականացվել են հետևյալ աշխատանքները.

**Մանկապատանեկան մարզադպրոցներում աշխարհը մարզիչ-մանկավարժների և ղեկավար անձնակազմի սոցիալական վիճակի բարելավում**

Այս նպատակով մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող մարզիչ-մանկավարժների և ղեկավար անձնակազմի պաշտոնային դրույքաչափերի և հավելավճարների վճարման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Որոշման ընդունմամբ զգալիորեն կբարձրանա մանկապատանեկան մարզադպրոցների (անկախ գերատեսչական պատկանելությունից) ֆինանսավորման մակարդակը, ինչը կհանգեցնի մանկապատանեկան մարզադպրոցներում մարզիչ-մանկավարժների և ղեկավար անձնակազմի խրախուսման համակարգի կարգավորմանը և կատարելագործմանը:

**Իրավական դաշտի կարարելագործում**

Մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 1-ի N<sup>o</sup> 1428-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագիծը: Նախագիծն ուղղված է մանուկների և պատանիների՝ ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու պայմանների նվազագույն չափորոշիչների հստակեցմանը, նոր դրույթների ընդգրկմանը, իրավական դաշտի բարեփոխմանը: Որոշման ընդունմամբ կապահովվի Հայաստանի Հանրապետությունում գործող մանկապատանեկան մարզադպրոցներում (անկախ գերատեսչական պատկանելությունից) մարզական հերթափոխի պատրաստման կազմակերպական հարցերի հիմնական նվազագույն պահանջների միասնական դաշտ:

Ներկայումս համաձայնեցման փուլում է և ս. թ. սեպտեմբերի 1-ից ուժի մեջ կմտնի ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի հրամանը, որով կկարգավորվեն մանկապատանեկան մարզադպրոցների ուսումնամարզական խմբերում պարապոլների նվազագույն քանակի, ըստ ուսուցման փուլերի շաբաթական ծանրաբեռնվածության և մարզական կատարելագործման խմբերում մարզական պատրաստության պահանջների հետ կապված հարցերը:

## **Մարզական հերթափոխի պատրաստում**

Մարզական հերթափոխի պատրաստման գործընթացի հիմնական ծանրությունը 2015 թվականի հունվարի 1-ի դրությամբ կրում են հանրապետության տարածքում գործող 172 մանկապատանեկան մարզադպրոցները, որոնց 3600 խմբերում 1930 մարզիչների ղեկավարությամբ 42 մարզաձևերով պարապում են շուրջ 41000 պատանի մարզիկներ, ինչպես նաև օլիմպիական հերթափոխի մարզական 2 քոլեջները:

Հանրապետության մանկապատանեկան մարզադպրոցների լավագույն և հեռանկարային մարզիկների համար մարզումները և կրթական գործընթացը համատեղելու, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի համար միջին մասնագիտական կրթությամբ մասնագետներ պատրաստելու խնդիրները լուծելու հարցում եզակի նշանակություն ունեն Երևանի և Գյումրու օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջները: 2014 թվականին նշված քոլեջներում սովորողների միջին տարեկան թիվը կազմել է համապատասխանաբար 870 ուսանող, որոնցից 609-ը ստացել են կրթաթոշակ:

## **Մարզակառույցների նյութափոխանակական բազայի ապահովում**

2003 թվականից սկսած՝ ՀՀ կառավարության որոշումներով իրականացվում է մարզակառույցները մարզագույքով ապահովելու ծրագիր: 2015 թվականին նախատեսված է հանրապետության 41 մանկապատանեկան մարզադպրոցներին, մարզաձևերի ազգային ֆեդերացիաներին և այլ մարզական հասարակական կազմակերպություններին հատկացնել 37 անուն մարզագույք՝ 170 մլն դրամ արժողությամբ: «Հայաստանի Հանրապետության մանկապատանեկան մարզադպրոցները, մարզաձևերի ազգային ֆեդերացիաները և այլ մարզական հասարակական կազմակերպություններ գույքով ապահովելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ներկայացված է ՀՀ կառավարություն:

2013 թվականից սկսվել են 5 մարզակառույցների շինարարական աշխատանքները:

Դրանցից 4-ը նոր են կառուցվում, 2-ը՝ կառուցվում-վերակառուցվում: Մեկ մարզադպրոցի կառուցման աշխատանքները ավարտվել են 2015 թվականի մայիս ամսին, մյուսները կավարտվեն 2015 թվականի դեկտեմբերին:

Սակայն սա փոքր մասն է կազմում այն մարզակառույցների, որոնք կարիք ունեն հիմնանորոգման և վերանորոգման:

## **Մանկապատանեկան մարզադպրոցների սաների բուժկանխարգելիչ զննումներ**

2010 թվականին հաստատվեց ՀՀ առողջապահության նախարարի ու ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի «Մարզերում մանկապատանեկան մարզադպրոցների սաների բուժկանխարգելիչ զննումները կազմակերպելու մասին» համատեղ հրամանը, որի համաձայն հաստատվել են մարզային ամբուլատոր պոլիկլինիկական բժշկական հաստատություններում տարեկան 2 անգամ անցկացվող բժշկական զննումների կարգն ու ժամանակացույցը՝ անկախ մարզադպրոցների գերատեսչական պատկանելությունից:

2014 թվականի I-ին կիսամյակում ՀՀ մանկապատանեկան մարզադպրոցներից ստացված տվյալների համաձայն բուժզննում են անցել 18491 պարապողներ: Նրանցից 164-ի մոտ հայտնաբերվել են տարբեր տիպի առողջական խնդիրներ, որոնցից 52-ը ուղարկվել են կրկնակի հետազոտության, 15 մարզիկ անցել են համապատասխան բուժում, իսկ 2-ը ազատվել են պարապմունքներից:

2-րդ կիսամյակում ստացված տվյալների համաձայն բուժզննում են անցել 19269 պարապողներ, որոնցից 201-ի մոտ հայտնաբերվել են առողջական տարբեր տիպի խնդիրներ: Այս մարզիկներից 54-ն ուղարկվել են կրկնակի հետազոտության, իսկ 5-ը ազատվել են պարապմունքներից:

### ***Մանկապատանեկան մարզադպրոցներում աշխատող մարզիչ-մանկավարժների վերապատրաստում***

ՀՀ կառավարության 2009 թվականի հունիսի 11-ի N 657-Ն որոշմամբ հաստատվել է «Մանկապատանեկան մարզադպրոցներում աշխատող մարզիչ-մանկավարժների վերապատրաստման հարցերի կազմակերպման ծրագիրը»: Համաձայն այդ որոշման՝ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը 2010 թվականից իրականացնում է մարզիչ-մանկավարժների վերապատրաստման ցիկլային ծրագիր: Հանրապետության շուրջ 1900 մարզիչ-մանկավարժներից այս տարիներին արդեն վերապատրաստում են անցել 875-ը: Ծրագիրը շարունակական է:

Միայն 2014 թվականին 6 ցիկլով իրականացվել է մարզադպրոցների մարզիչ-մանկավարժների վերապատրաստման կազմակերպում, որի արդյունքում վերապատրաստվել են 149 մարզիչ-մանկավարժներ: 2015 թվականին մարտ ամսից սկսվել է վերապատրաստման 2015 թվականի գործընթացը: Վերապատրաստման 2 ցիկլի արդյունքում վկայականներ են ստացել 53 մարզիչ-մանկավարժներ:

### ***ՀՀ Նախագահի անվանական թոշակի հատկացում***

ՀՀ Նախագահի 2009 թվականի հունվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի կազմում օլիմպիական խաղերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում բարձր արդյունքների հասած մարզիկներին և նրանց մարզիչներին Հայաստանի Հանրապետության Նախագահի անվանական թոշակ հատկացնելու մասին» ՆԿ-1-Ն կարգադրության համաձայն մարզական բարձր արդյունքների համար հաջորդ տարվա հունվարի մեկից մարզիկներին, նրանց անձնական և հավաքական թիմերի մարզիչներին 1 տարով հատկացվում է ՀՀ Նախագահի անվանական թոշակ: Հանրապետության Նախագահի անվանական թոշակի նշանակումը և վճարումը նպատակ ունի բարձր արդյունքների հասած մարզիկներին և նրանց մարզիչներին խրախուսելու, և խթան է դառնում բարձր նվաճումների համար: ՀՀ Նախագահի անվանական թոշակի հատկացումը որոշ չափով լուծում է ՀՀ հավաքական թիմերի մարզիկների, նրանց անձնական և հավաքական թիմերի մարզիչների սոցիալական վիճակի բարելավման խնդիրը:

ՀՀ Նախագահի անվանական թոշակի հատկացումը մարզիկներին մղում է նոր նվաճումների: Այսպես, եթե 2009 թվականին անվանական թոշակ ստացել են 102 մարզիկ և մարզիչ, ապա 2015 թվականին ստացողների թիվը կազմել է 149: Նշենք, որ տարեցտարի աճում է նաև մարզաձևերի թիվը: Եթե 2009 թվականին մարզաձևերը 11-ն էին, ապա 2015 թվականին՝ 13-ը: